

մը չունենալը, ինչ որ ոչ նուազ նշանակելի է:

Դարանազցի կը նկարագրէ թէ այս պատճառով ժողովուրդը ինչպէս գանգատեցաւ Տիւանին մէջ: «Եւ եղևայ բազմաթիւ ֆահանայիւք եւ ժողովրդոք գանգատունելի ձեռաց անբարսաւան Մղայիմ Սափինեցւոցն թի՛ ամենայն միլլաթ գլխաւոր եւ առաջնորդ ունին, եւ իւրեանց առաջնորդին հրամանաց դուրս չեն ելներ, քան զհրեական ազգն անարգ կան ոչ, նոքա իւրեանց խախամին հնազանդ են: Մեր յաճնասցի ճամխար կան, մեկ ֆանի ունևն գփռխարայ դարիպ ֆահանայք եւ ժողովուրդի կու չարչարեն, յեկեղեցոյ կու վարեն թի՛ մեր մուլքն հ եկեղեցիին: Մեևն կ'աւեևն թի՛ մեևն այդ բազաւորին ըռաւան եևն եւ այս եկեղեցիքս այդ բազաւորին օժիտն հ եւ պախշիշն. մեզ այս ցեղ եկողութիւն կու հաստցակենն ի քո աւուրն: Այսպէս բողոքեցաք առաջի ամենայն նախարարացն Սուլթան Մուրաթին⁽¹⁾ եւ ամենայն մեծամեծաց նորս: Եւ

(1) Դարանազցի յիշողութեան վրէպով մը Սուլթան Մուրատի անունը կու տայ. վասնզի 1608ին զահուն վրայ էր Սուլթան Ահմէտ Ա. (1603-1617):

Սուլթան Մուրատ Գ. (1574-1595) շատոնց մեռած էր եւ Սուլթան Մուրատ Դ. (1622-1640) շատ ուշ պիտի գահակալէր:

Կեսարացի որ առաջին անգամ պատրիարք ե-